ԿԻՐՈՎԱԿԱՆՑԻՆԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ[1]

ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ

Բանալի բառեր - Կիրովական, կրոնական, հակակրոնական, եկեղեցական, վարքագիծ, խորհրդային, սոցիալ-մշակութային, տոն, ավանդական:

Սույն հետազոտության նպատակը կիրովականցիների կրոնական վարքագծի ամբողջական վերլուծությունն է խորհրդային ժամանակաշրջանում:

Խորհրդային սկզբնական փուլն (1920-1930թթ.), ինչպես ամբողջ Հայաստանում, այնպես էլ Կիրովականում առանձնանում է ընդգծված հակակրոնական և ապազգային քաղաքականությամբ, որն իր ազդեցությունն ունեցավ հավատքի անկման վրա:

Պետության հակակրոնական քաղաքականության թիրախը, նախ և առաջ, հայոց կրոնա-ավանդական տոներն ու ծեսերն էին: Բնականաբար հալածանքն ուղղված էր հատկապես եկեղեցիների և հոգևորականների դեմ և դրսևորվում էր եկեղեցիների փակմամբ, ավերումներով, հոգևորականների սպանություններով և աքսորով:

Հակակրոնական միջոցառումների կազմակերպիչները հիմնականում հանրապետական և մասնավորապես տեղական «Մարտնչող անաստվածների միություն» կազմակերպությունն էր: Սակայն դրանց գոր-

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6D202 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ծունեությունն անարդյունավետ էր և պայմանավորված էր դեռևս պահպանված ազգային և կրոնական ավանդույթներով։

Երկրորդ աշխարհամարտի ժամանակ նկատվում է կիրովականցիների կրոնական վարքագծի որոշակի աճ, որը պայմանավորված էր պատերազմական իրավիճակով։

Խորհրդային վերջին շրջանում պետության հակակրոնական քաղաքականության հետևանքով բավականին անկում էր ապրել կիրովականցիների կրոնական վարքագիծը, որը պայմանավորված էր հատկապես կրոնը մերժող հատուկ կրթական քաղաքականությամբ։

Էթնոսոցիոլոգիական հետազոտությունների (1980թ.) արդյունքներն ամբողջությամբ արտացոլում են կիրովականցիների կրոնական վարքագծի իրական պատկերն ըստ հավատքի նկատմամբ վերաբերմունքի, եկեղեցի գնալու դրդապատճառների և եկեղեցական տոների տարածման մասշտաբների։

Կիրովականցի հավատացյալների ընդհանուր թիվը կազմում է 25,3%, տատանվողները՝ 22,2%, անտարբերները և անհավատները՝ 41,8%, իսկ կրոնի դեմ ակտիվ պայքարողները կամ անհանդուրժողները՝ 8,8%։

Ծնողների կրոնական վարքագծում որոշակի գերակայություն ունեն մայրերը (մայրը՝ 39,9%, հայրը՝ 27,7%)։

Եկեղեցի գնալու համատեքստում կրոնական և ժամանցային բնույթի գործոնները գրեթե հավասար են։ Կրոնական դրդապատճառները ներառում են հետևյալ ծիսական բաղադրիչները. մոմավառություն՝ 9,8%, աղոթք՝ 6,7%, պատարագ՝ 1,5%, մատաղ՝ 1,0%, տոներ՝ 1,0%, կնունք՝ 0,5 %, ուխտագնացություն՝ 0,5%։ Ժամանցային կամ պատահական բնույթի գործոններն ունեն հետևյալ պատկերը. հետաքրքրություն՝ 12,9%, էքսկուրսիա՝ 4,1 %, պատմական հուշարձան՝ 1,5 %, մերձեցում ազգային մշակույթին՝ 1,0 %, առանց առիթի՝ 1,0 %։

Բարեկամական փոխայցելությունները հատկապես տարածված են տոնական և ընտանեկան հանդիսությունների ժամանակ՝ 48,8%։

Եկեղեցական տոներից ամենատարածվածը Զատիկն է (56,7%) և մասամբ՝ Վարդավառը (17,0%)։ Ամենաքիչը նշվել են Վարդանանցը (5,2%),

Համբարձումը (6,2%), Սուրբ Աստվածածնի վերափոխումը (6,7%), Քրիստոսի Ծնունդը (8,2%), Խաչվերացը (8,2%) և Տեառնընդառաջը (8,2%)։

Ուշագրավ է, որ կիրովականցիների մեծ մասը եկեղեցի չի գնացել ընդհանրապես (57,2%)։

Սույն հետազոտության նպատակը կիրովականցիների[1] կրոնական վարքագծի վերլուծությունն է խորհրդային շրջանում։

Խորհրդային շրջանի հատկապես առաջին տասնամյակը (1920-1930-ական թթ.), ինչպես Հայաստանում, այնպես էլ Կիրովականում առանձնանում էր ընդգծված հակակրոնական և ապազգային քաղաքականությամբ, որը մեծ ազդեցություն ունեցավ բնակչության կրոնական վարքագծի անկման վրա։

Հակակրոնական քաղաքականության գլխավոր թիրախը հայոց կրոնա-ավանդական տոներն ու ծեսերն էին, ուստի եկեղեցիներն ավերվում, իսկ հոգևորականները սպանվում կամ բռնաճնշումների էին ենթարկվում։ Դարեր շարունակ հայոց ինքնությունն արտացոլող և պահպանող եկեղեցին[2] խորհրդային շրջանում դարձավ հալածանքի առարկա նաև Կիրովականում և ողջ Լոռիում։

---

[1] Մինչև 1935թ. քաղաքը կոչվում էր Մեծ Ղարաքիլիսա։ 1935թ. ԽՍՀՄ իշխանությունները քաղաքն անվանափոխում են ի պատիվ հեղափոխական գործիչ **Սերգեյ Կիրովի** և կոչում **Կիրովական**Վերջինիս խորհրդայնացումից (1920թ.) հետո, 1936-ին, ԽՍՀՄ իշխանությունները քաղաքն անվանափոխում են ի պատիվ հեղափոխական գործիչ **Սերգեյ Կիրովի՝** այն կոչելով **Կիրովական** (տե՛ս Վանաձոր, Պատկերազարդ պատմություն, Հին ու նոր ավանդույթներ, Նոյյան Տապան հրատ., Երևան, 2012, էջ 12, 20, 24, 25, 26, 31, 32, 34, 35,44, 45, 4 6/488 էջ/։ Կիրովական, Հայկական Սովետական հանրագիտարան, հատոր 5, Երևան, 1979,էջ 462-464)։

[2] Կիրովական-Վանաձորի տարածքում եղել են և կան նաև միջնադարյան և ուշ շրջանի հուշարձաններ։ 1996թ. այստեղ ցանկագրված և հաշվառված էին պահպանության ենթակա ավելի քան 300 վանք ու եկեղեցի, որոնց մի մասը կառուցվել է վաղ միջնադարում։

● Փամբակ գետի աջ ափին, երկաթգծի հարևանությամբ, ոչ այնքան բարձր բլրի վրա, 8-9-րդ դդ. Կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին բազմիցս ավերվել է։ Վերջին անգամ եկեղեցին խոնարհվել է 1828թ. աղետալի երկրաշարժից և վերականգնվել 1831թ.։

● Ավերված վանք՝ քաղաքի անտառալանջի բացատում, որը կառուցվել է 5-րդ դարում։

● Մատուռ Վանաձոր կիրճում, «Ծիծեռնակ» պիոներական ճամբարի դիմաց։ Այժմ այդ մատուռն ավերված է, սակայն պահպանվել են գերեզմանաքարեր և մեկ խաչքար։

● Վանք՝ կառուցված 5-րդ դարում։ Տեղորոշվում է քաղաքի Սասունցիների փողոցի սկզբնամասում, վերաշինվել է 1894թ.։ Պահպանվել են նաև մի քանի խաչքար և քառակող կոթող։ Այժմ վերակառուցվում է։

● Սուրբ Կիրակի եկեղեցի (Սուրբ Հարություն), Խնձորուտ, վերականգնվել է 1894թ.։

● Սուրբ Կամակատար, վաղ միջնադարյան մատուռ (Տարոն թաղամաս), վերականգնվել է 1841թ.: Մատուռի պատին պատկերված է Աստծո զորեղ ձեռքն այն մուրճով, որն, ըստ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի, հարվածել ու հարթել է Քրիստոսի իջման վայր էջմիածինը:
● Սուրբ Սարգիս մատուռ (Գուգարք գյուղի բարձունք):
Սուրբ Կամակատար և Սուրբ Սարգիս մատուռներն ունեն վաղ շրջանի խորհրդանշաններ, բայց թվագրված են վերջին վերանորոգման շրջանով՝ 19-րդ դար (1841թ. և 1809 թ.):
● Վանք: Ենթադրվում է, որ այն կառուցվել է 7-9-րդ դդ.: Գտնվում է քաղաքի Խնձորուտ թաղամասի հին գերեզմանատան մոտ: Հետագայում այդ վանքը ձևափոխվել է, կան 13 գեղաքանդակ խաչքարեր: Ենթակա է վերականգնման:
● Վանք՝ «Կոտրած եկեղեցի» անվամբ: Գտնվում է քաղաքի արևմտյան մասում՝ դեպի Գյումրի տանող ճանապարհի աջ կողմում՝ «Տավրոս» թաղամասի տարածքում: Հնագետների ենթադրությամբ՝ վանքը կառուցվել է 5-7-րդ դարերում:

Պարզվում է, որ քաղաքի հարավային մասում՝ Փամբակի լեռնաշղթայի ստորոտում, դեռևս շատ հնում գոյություն են ունեցել երկու գյուղ: Դրանցից մեկը կոչվել է Վանաձոր, մյուսը՝ Պապանի գյուղ՝ ոմն Պապանի անունով, որը եղել է այդ գյուղի բնակիչ, գուցե և տանուտեր: Կա նաև կարծիք, թե այս բնակավայրը կոչվել է Տապանի գյուղ, որի սրբավայրում՝ Սուրբ Նշանում, պահվել է Սուրբ Հակոբ Մծբնեցի եպիսկոպոսի բերած Նոյի տապանի մասունքից, որը Քրիստոսի Խաչափայտի Սուրբ Նշանի օրինակով որպես մասունք բաժանվել է հայոց եկեղեցիներին: Պապանի գյուղն անմարդաբնակ է դարձել 18-րդ դարի կեսերին, որի վերջին բնակիչները՝ Ղուշչյանների գերդաստանը, այստեղից հեռացել են և հիմնավորվել Մեծ Ղարաքիլիսա գյուղում: Վանաձոր գյուղը գոյություն ուներ մինչև 19-րդ դարի սկիզբը: Այս երկու գյուղերի տարածքում եղել են մի քանի վանքեր, որոնց պատճառով էլ գյուղերից մեկն անվանվել է Վանքաձոր կամ Վանք, ապա, հնչյունափոխվելով, դարձել Վանաձոր:
Վաղ միջնադարում (3-8-րդ դդ.), այժմյան քաղաքի Տավրոս թաղամասի (նախկին Ղշլաղ գյուղի) հրապարակում, կառուցվել է մի սքանչելի քրիստոնեական հուշարձան, որը մարմնավորում էր Գր. Լուսավորչի երազը: Գետնախարիսխների վրա բարձրացող այս հուշակոթողը արևելքի կրոնական ուղղություններին բնորոշ Գրիգոր Լուսավորչի «տեսիլքն» էր, որը կոչված էր հիմնավորելու այն դրույթը, թե իջնելով «Շողակաթի» ձևով՝ Միածինը տքնող Լուսավորչին շնորհել է հայոց եկեղեցու հովվապետությունը: Այդ կառույցը հիմնովին ավերվել է խորհրդային տարիներին, և լուսանկարն անգամ չի պահպանվել (տե՛ս Վանաձոր, Պատկերազարդ պատմություն, Հին ու նոր ավանդույթներ, Նոյյան Տապան հրատ., Երևան, 2012, էջ 24-25 /488 էջ):
Ս. Հովհաննես եկեղեցի - կառուցվել է 1745-1750 թթ. Փամբակ գետի աջ ափին, գործել է մինչև 1930-ականների կեսերը, երբ մահացավ սպասավոր հոգևորական Տեր-Հովսեփը: Այն օգտագործել են որպես կոլտնտեսության պահեստ, իսկ 1940-ականներին կեսերին քանդել են և նրա քարերով գոմ կառուցել:
Ս. Սարգիս մատուռ - կառուցվել է 1899-1901թթ.՝ գյուղի հյուսիսային բարձունքին գտնվող բլրի վրա՝ Փամբակ գետի հարևանությամբ: Ս. Սարգիս մատուռը «ականատեսն է ու մասնակիցը» 1918թ. Ղարաքիլիսայի հերոսամարտի վերջին ակորդների, երբ Գարեգին Նժդեհը, հայկական զորքի մի հատվածով նահանջելով բուն ճակատամարտի վայրից, անցել է Փամբակ գետը, բարձրացել Ս. Սարգսի բարձունքը և վերջին կռիվը տվել թուրք հրոսակների դեմ (տե՛ս **Գ. Քարհանյան**, Գուգարք. Հնագույն հայկական բնակավայր, գիրք առաջին (Հնագույն ժամանակներից մինչև 1950 թվականը), «Ասողիկ» հրատ. Տպարան, Երևան, 2011, էջ 56-57):

Հակակրոնական պայքարի կազմակերպիչները հիմնականում հանրապետական և Ղարաքիլիսայի տեղական «Անաստված» կամ ՄԱՄ[1] կազմակերպություններն էին։ Սակայն վերջիններիս գործունեությունն անարդյունավետ էր, որը պայմանավորված էր դեռևս պահպանված կրոնական ու տոնածիսական ավանդույթներով։ Խոսքը վերաբերում է ՄԱՄ-ի գործունեությանն ինչպես բուն Ղարաքիլիսայում[2], այնպես էլ Լոռվա[3] և հանրապետության այլ բնակավայրերում[1]։

---

[1] ՄԱՄ- Մարտնչող անաստվածների միություն։

[2] Դեռ մի քանի ամիս առաջ Ղարաքիլիսայում ընտրվել է ՄԱՄ-ի շրջխորհուրդ, որը մինչ օրս ոչ մի բեկում չի կարողացել առաջ բերել իր աշխատանքներում։ Աշխատանքներն ինքնահոսի թողնված լինելը կարելի է հաստատել և նրանով, որ ամիսների ընթացքում գոյություն ունեցող բջիջներում ոչ մի զեկուցող չի գնում, բացի շրջխորհրդի նախագահից, որը հազիվ մի կերպ հնարավորություն է ունեցել մի երկու անգամ լինելու բջիջներում։ Ղարաքիլիսայի շրջխորհուրդը ոչինչ չի արել 3-րդ վճռական տարվա փոխառության տարածման, բերքահավաքի, կոլխոզշարժման, սոցմրցման և հարվածայնության համար։ Հարկավոր է անմիջապես ամենակտրուկ միջոցներ ձեռք առնել շրջխորհրդին և բոլոր բջիջներին աշխատանքի լծելու համար (տե՛ս **Վ. Թադևոսյան**, Մի Յեռանդուն շրջխորհրդի դեմքը /Ղարաքիլիսա/, Անաստված, Պետհրատի տպարան, Երևան, 1931, N 7-8, էջ 12)։

ՄԱՄ-բջիջները քարտուղարների հետ հարցերը լուծում են տնավարի, փողոցում, և այսօր ոչ մի բջիջի քարտուղար իրեն պատասխանատու չի զգում այդ գործի համար։ Երբեմն էլ լսվում են, թե ՄԱՄ-ի բջիջները ուրիշ ոչինչ չունեն, բացի տարեկան անդամավճար հավաքելուց։ Փաստորեն այս մի տարվա մեջ մենք չլսեցինք համաքաղաքային կամ միացյալ բջիջային ժողովներում մի հակակրոնական գիտական զեկուցում, որը հնարավոր էր, բայց նախաձեռնություն չկար։ Միանգամայն դատապարտելի է մեր գործարանների և հիմնարկների գործարկում տեղկոմների, կուս. և ԼԿՅԵՄ բջիջների անփութությունը։ Նրանք կարծես թե ավելորդ են համարում հակակրոնական աշխատանքը. օրինակ՝ Քիմշինը, Գրանիտը։ Հակակրոնական աշխատանքները ավելի խայտառակ դրության մեջ են գտնվում շրջանի գյուղերում։ Սիստեմատիկ աշխատանք չի տարվում պիոներական կազմակերպության մեջ։ Չի կազմված պատանի մարտնչողների խմբակներ։

Կարծում ենք, որ կուս. ռայկոմի կուլտ պրոպը այս ուղղությամբ վճռական միջոցներ կձեռնարկի վերակառուցելու ՄԱՄ-ի շրջխորհուրդը (տե՛ս Նորից Ղարաքիլիսայի ՄԱՄ-ի շրջխորհրդի մասին, Անաստված, Երևան,1932, N 5-6, էջ 21, Հարվածային թղթակից՝ Վարդան)։

[3] Հակակրոնական պրոպագանդան մինչ այժմ շատ թույլ է ընթացել Ալահվերդու շրջանի գրեթե բոլոր գյուղերում։ Այստեղ հակակրոնական աշխատանքը դարձել է երկրորդական։ Շրջանում եղած բոլոր անաստված բջիջները համարյա քայքայվել են։ Այսպես օրինակ, Հաղպատում պարբերաբար գործում են հեքիմները, որոնք իրենց սնամիտ գործերով կատարում են խայտառակ երևույթներ։ Եղել են դեպքեր, որ հեքիմների ձեռքով կինը խելագարվել, մահացել է։ Նույն շրջանի Աքորի գյուղում սովորական երևույթ է անչափահասների ամուսնությունը։ Ալահվերդու շրջանի բոլոր գյուղերում նկատվում է հին

Հակակրոնական միջոցառումները մեծ մասամբ կազմակերպում էին խորհրդային տոների կապակցությամբ։ Այս առումով հատկապես առանձնանում էր կանանց գլխավոր տոնը՝ Մարտի 8-ը[2]։

կենցաղի այս կամ այն ձևը (տե՛ս **Հ. Մուրադյան**, Ուժեղացնել հակակրոնական աշխատանքը, Անաստված, Երևան, 1931, N 7-8, էջ 16)։

[1] Դեռ 10 տարի առաջ էր, որ Գևորգ 5-րդ կաթողիկոսը ծովից-ծով Հայաստանի քարտեզն էր օրհնում վեհարանում և աղոթում քյալագյոզ մինիստրների հաջողության համար։ 1921թ. փետրվարի ավանտյուրայի ժամանակ հարյուրավոր տերտերներ, ոգևորված կաթողիկոսի կոնդակից, խաչն ու մաուզերը ձեռքերին պայքարում էին բոլշևիկներ դեմ՝ հանուն դաշնակցության։ Ի՞նչ կար դաշնակցական Հայաստանում. օրը ցերեկով, թալան, սպանություն, ավերածություն էր կատարվում։ Շատ հասկանալի է, թե ինչ դպրոցական և հասարակական կրթություն պետք է ստանային մեր պատանիները դաստիարակ-կրոնուսույց տերտերների և խմբապետ-վարժապետների միջոցով։ Խորհրդային իշխանությունը մեր մասսաներին հասցրեց դասակարգային գիտակցության, որից հետո արթնացած մասսաներն իրենք զգացին եկեղեցու դեմ պայքարելու անհրաժեշտությունը և ծավալելով հակակրոնական ագիտացիայի և պրոպագանդայի աշխատանքները Հայաստանում՝ հսկայական բեկում առաջ բերին հավատի բնագավառում, որով զարկ տվին նոր կենցաղի ամրացման ու հաստատման մեծ գործին։ Եվ այսօր, եթե ամեն օր իրար հետևից աշխատավորության պահանջով փակվում են եկեղեցիները՝ դա շատ բնական է, որովհետև մասսաներն զգում են նրանց ավելորդությունը և հակառակ դաշնակ-կուլակային էլեմենտների վայնասունի՝ փակված եկեղեցիները փոխարինվում են կուլտուրական-հասարակական վայրերի։ ՄԱՄ-ն օրեցոր աճում է ու մեծանում։ Այսօր մարտնչող անաստվածների թիվն ամբողջ Հայաստանում հասել է արդեն 40000-ի, որոնք ամեն օր հսկայական կուլտուրական պահանջներ են առաջադրում ՄԱՄ-ի Կենտրոնական Խորհրդին (տե՛ս **Մանկունի**, Խորհրդային Հայաստանի տասնամյակը, Եջմիածինն ու դաշնակցությունը, Անաստված, Երևան, 1930, 10-11, էջ 5-7)։

Վերջացավ հարվածային եռամսյակը և մենք պլանների կատարումով և գերակատարումով թևակոխում ենք բոլշևիկյան հնգամյակի երրորդ տարին։ Մեր ողջ հակակրոնական աշխատանքը պիտի վերածել սիստեմի այն հաշվով, որպեսզի նա մեր սոցիալիստական շինարարության կարևոր օղակներից մեկը հանդիսանա։ Այդ աշխատանքներում պիտի ամենալայն չափով մասնակից դարձնել գյուղի կուլտուրական ուժերին՝ ագրոնոմ, ուսուցիչ, բժիշկ և այլն։ Լայն չափով պիտի տարածել հակակրոնական գրականությունը՝ թերթեր, ժուռնալներ, բրոշյուրներ, պլակատներ և այլն։ Հունվարի 5-ին բոլոր բջիջներում հրավիրվում են ժողովներ, ուր արվում են զեկուցումներ, որից հետո կազմակերպել հակակրոնական երեկույթներ, ցուցադրել կինոֆիլմեր և այլն։ Բանվորական և կարմիր զորամասերի կազմակերպությունները կազմակերպում են մերձեցման երեկո։ Բոլոր կոլխոզներում կազմակերպել զեկուցումներ.ՄԱՄ-ի ԿԵՆՏԽՈՐՀՈՒՐԴ (տե՛ս Մարտնչող անաստվածների միության կոչը բոլոր քաղ. և շրջխորհուրդներին. ՄԱՄ-ի Կենտխորհուրդ, Անաստված, Երևան, 1930, 12, էջ 22)։

[2] Կանանց Միջազգային Կոմունիստական օրը, Մարտի 8-ը՝ ամբողջ ԽՍՀՄ-ում անցնում է բանվոր դասակարգի, կոմունիստական կուսակցության, նրա կենտկոմի լենինյան ղեկավարությամբ, ընկ. Ստալինի գլխավորությամբ ձեռք բերված մեծագույն հաղթանակների պայմաններում։ ՄԱՄ-ի Հայաստանի Կենտխորհուրդը առաջարկում է իր բոլոր շրջխորհուրդներին և բջիջներին ակտիվ մասնակցել այդ օրվա անցկացմանը հետևյալ կարգախոսներով.

Երկրորդ աշխարհամարտի և հետպատերազմյան շրջանում, չնայած պետության հակակրոնական քաղաքականությանը, կենցաղում նկատվում է բնակչության կրոնական վարքագծի որոշակի աճ, որը պայմանավորված էր պատերազմական իրավիճակով: Այդ երևույթը բնորոշ էր նաև Լոռու գրեթե բոլոր բնակավայրերին: Այստեղ մատաղ անելու սովորույթը մեծ չափերի հասավ Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Ռազմի դաշտ մեկնած իրենց որդիների ու մերձավորների կյանքի համար օրուգիշեր անհանգստացող հարազատները հաճախ հույսի այլ աղբյուր չունեին, քան Աստված և նրան զոհաբերվող մատաղը, որն անում էին իրենց աղոթքն ու խնդրանքը Տիրոջը հասցնելու համար[1]:

Ուխտագնացության և մատաղի ավանդույթները բավականին խորն արմատներ ունեին ինչպես Մեծ Ղարաքիլիսայում, այնպես էլ ողջ Լոռիում[2]: Մինչդեռ խորհրդային իշխանությունները մերժում և հալածում

● Կազմակերպել մասսայական աշխատանք մարտի 8-ի նախօրյակում, դասախոսություն, զեկուցում, զրույց, հետևյալ թեմաներով՝ «կինը և կրոնը», «ինտերնացիոնալ դաստիարակության խնդիրները և կրոնը» և այլն:

● Կրոնը, 3-րդ բոլշևիկյան գարնանացանը և անաստված կանանց մասնակցությունը:

● Արտադրության մեջ աշխատող բանվորուհիների շարքերում տարված հակակրոնական ագիտացիայի և պրոպագանդայի ստուգատեսը (տե՛ս Մարտի 8-ը, Անաստված, Երևան, 1932, N 4, էջ 7-8):

[1] **Գ. Քարհանյան**, Գուգարք. Հնագույն հայկական բնակավայր, գիրք Առաջին (Հնագույն ժամանակներից մինչև 1950 թվականը), «Ասողիկ» հրատ. տպարան, Երևան, 2011, էջ 70:

[2] Երբ մոտենում են ուխտագնացության օրերը, գերդաստանի մեջ առանձին տրամադրություն է սկսում տիրել. հարսերն ու աղջիկները, ինչպես և երիտասարդները՝ զարդարվելու, կոկվելու տենչով բռնված, ստիպում են իրենց ամուսիններին և ծնողներին նոր հանդերձներ, կոշիկներ առնել: Գերդաստանի մեծն այս օրերին առատաձեռն է դառնում և փոքր ինչ բաց անում ընդհանուր քսակի այնքան սեղմված բերանը: Սակայն, որովհետև բոլորին բավականություն չի տրվում, ուստի դժգոհությունը, արցունքը, բամբասանքն ու զրպարտությունն սկսում են թունավորել այն հոգեկան մեծ բավականությունը, որ ստանում են այդ ուխտից:

Ուխտագնացության վերջընթեր /նախորդ/ օրը տանտիկինը հարսների հետ լվացք է անում, հաց, գաթա, բաղարջ թխում, պաշարներ կապում, պատրաստում: Նախօրյակին մոտիկ բարեկամները միասին, խմբեր կազմած, կառքերով և ձիերով գնում են ուխտատեղի՝ Վարդաբլուրի Ս. Սարգիս, Օձունի Ս. Սարգիս, Օձունի Ս. Նշան, Հաղբատ, Սանահին, Արդուի Ս. Օհան և այլն:

Շատ գյուղերում կառքեր, սայլեր չլինելու պատճառով մեծամասնությունը հետի է գնում, միայն երիտասարդները, կանայք ու աղջիկները՝ ձիով. առաջիններն՝ իրենց թի քշելու, ջիրիթ խաղալու շնորհքը ցույց տալու, երկրորդները՝ հարուստ լինելն ապացուցելու համար: Կանայք տղամարդկանց նման են ձի նստում. թամբն առնում են իրենց երկու ոտքերի մեջ: Գրեթե բոլորն էլ շատ վարժ են լինում, որովհետև հենց 7-8 տարեկան հասակից խոտ,

հունձ կրելով, վարժվում են։ Սակայն շատ քչերին է վիճակվում միայնակ մի ձի նստել, սովորաբար 3-4 հոգուն մի ձի է ընկնում։ Նրանք այսպես են օգտվում. տարիքովը նստում է թամբի վրա, երեխային առնում գիրկը, աղջկան կամ հարսին՝ գավակը, իսկ մյուս տարիքավոր կինը ձիու պոչից բռնած գնում է, ձին նրան քաշում է։ Երբ հոգնում է, ինքն է նստում ձին, և առաջին նստողը՝ նույն կերպ քայլում։ Եթե ձին չար է, կամ հեծնողները՝ անվարժ, մի տղամարդ ձիու սանձից բռնած քաշում է։

Երբ հասնում են ուխտատեղին, մի ծառի տակ իջնում, ձին մի տեղ կապում՝ արածելու, և մեկին պահապան թողնելով իրերի և ձիու մոտ՝ շտապում են ուխտավայր՝ առնելով իրեն հետ բերած մոմերը։

Ուխտատեղի դուռը, խաչարձանը, պատկերը մի քանի անգամ ջերմեռանդությամբ համբուրելուց հետո վառում են մոմերը և աշխատում կպցնել որքան կարելի է մոտ խաչքարի, պատկերի վրա, որից էլ սրանք փչանում են։ Հետո մի քանի անգամ երկրպագում են, ապա չոքած, ապա լսելի ձայնով շշնջում. Ով (այս անուն սուրբ), երեսս ոտիդ տակը, դու իմ բալենու (փոքրերի) ռուզդը (պարենը) հասցնես, դու սրանց արևշատություն ու սաղ ջան տաս, դու հանդ ու հանդաստանը ցասումից ազատես, աշխարհքին առատություն տաս, դու ամեն նեղացածի փրկես։ Մեղա քեզ, Տեր, անարժան մեղավոր եմ, դու քո ստեղծածը չի կորցնես, դու իմ մեղավոր հոգուն մի լիս ու ճար անես, արքայությունից մասն ու բաժին տաս, դու չի դուշմանի սրտով անես, նամարտի մոհտաջ. քու լիս երեսին ղուրբան, քու լիս տաճարին ղուրբան, դու քաղցր աչքով մտիկ անես իմ տանն ու տեղին, իմ տիրոջը /ամուսնուն/. դու շառից ու փոր-ձանքից ազատես, անդարձին դարձ տաս, չարը կործանես, բարին առաջացնես. դու մեր հողն ու ջուրը պտղացնես, ազար-բեզարը հեռացնես, աշխարհի ռուզդը շատացնես, թագավորի սիրտը կակղացնես, կարկուտը կորցնես, ձինն ու անձրևը առատացնես, աշխարհին հանդարտություն տաս, մեծերին՝ հաշտություն, հիվանդներին՝ սաղություն։

Դեռ աղոթքը չվերջացած՝ քահանան կամ տիրացուն պոկում են վառած մոմերը և տալիս երեցփոխին՝ նորից վաճառելու, ու ձայն տալիս աղոթողներին, որ դուրս գան, նոր եկողներին էլ տեղ լինի։

Սկսում են դուրս գալ և խմբվել ուխտատեղիին կից բարձրացած հինավուրց, սուրբ համարված ծառերի և խաչքարերի շուրջ։ Այստեղ շատերը պատռում են իրենց հանդերձներից մի կտոր և կապում ծառի ճյուղերից, որպեսզի իրենց ցավերն էլ այդ շորերի հետ կապված մնան այդտեղ և այլևս չնեղացնեն իրենց։ Ոմանք էլ բամբակի թելերի շարաններ՝ ծայրերը մեղրամոմով ամրացրած, նույն հավատով կապում են ծառի ճյուղերից։ Ավելի ջերմեռանդերն իրենց ծամերն են կտրում և կապում ծառերին։ Հիվանդ կանայք վզներից հանում են երկաթյա մանյակները, որ «խաչի սիրուն» կրել են մի ամբողջ տարի, և կախում ծառից կամ դնում խաչարձանի առաջ։ Ուրիշներն էլ մարդակերպ կամ ոտքի, ձեռքի նմանությամբ երկաթե շինվածքներ են դնում խաչարձանի առաջ, որպեսզի իրենց հիվանդություններն այդ արձանների մեջ ամփոփված մնան այնտեղ և ազատ թողնեն իրենց։ Ամուլ կանայք ծառի ճյուղերից ճոճք են ձգում և երեխայի տիկնիկ դնում մեջը, որ երեխա ունենան։ Կանայք երեխայի ծաղիկ հանած ժամանակ նոր կարված ու հագցրած շապիկը հանում են և կախում ծառից, որպեսզի ծաղիկը չկրկնվի։ Սակայն կանայք չեն բավականանում միայն իրենց իղձերը սրբին հայտնելով, այլևս ցանկանում են իմանալ, թե արդյոք կատարվելո՞ւ են, թե՞ ոչ։ Նվաղկոտ կանայք, ինչպես կուրթանեցի Անուշը, այլևս չեն լինում։ Նոր սերունդը հալածում է նրանց, այնպես որ կանայք զրկված են այդ քրմուհիներից։ Ուստի նրանք քարի կտոր են վերցնում և խաչարձանի, սեղանի բեմի վրա քսում, երբ կպչում է, այդ նշան է, որ սուրբը կատարելու է նրանց ուխտը։

Ուխտատեղից բազմությունը կամաց-կամաց իջնում է դեպի մրգավաճառների և մանրավաճառների շարքերը և թաշկինակներով ծանրաբեռնված քաշվում իրենց տեղերը: Կանաչ խոտի վրա փռում են նույնպես կանաչագույն սփռոցները, և սկսում է կերուխումը, երգն ու պարը, որը տևում է մինչև կես գիշեր: Նվագածուների խումբը տեղից տեղ անցնելով ավելի ու ավելի ուժեղացնում է ուրախությունը:
Խմիչքի ազդեցությունից տաքացած գլուխները ահագին աղմուկ են բարձրացնում, դաշույնն ու ատրճանակները ձեռքերին պարում և «ուռա»-ի աղաղակով արձակում:
Ավելի ճարպիկներն այս մրցության մեջ տքնում են սիրային տեսարաններ սարքել, իսկ ավելի ընչաքաղցները աշխատում են սրանից, նրանից մի բան թռցնել /գողանալ/, բայց, երբ մեկը բացվում է, սկսում է տուրուդմբոցը, իսկ երբեմն մեծանալով՝ զոհեր է տանում: Վերջապես, հոգնած ու հագեցված, խոտերի վրա ընկնում, քնում են 2-4 ժամ:
Վաղ արշալույսին սկսում են **մատաղ** կտրել: Բազմաթիվ գառներ ու ոչխարներ են զոհում: Դրվում են ահագին կաթսաները, որոնց մեծ մասը ուխտատեղին կառավարող երեցփոխն է կառավարում, և սկսվում է «մատաղի» պատրաստությունը: Հետզհետե մոտակայքից նոր ուխտավորներ են գալիս խմբերով և սրանց հետ միացած մտնում ուխտատեղին համբուրում, ուխտ անում, վերադառնում, կրկին սփռոցները սփռում, «մատաղը» արյունոտ խորովածի հետ ուտում, մի լավ կոնծում, երգում, պարում և շտապ վերադառնում տուն՝ ճանապարհին մի-երկու տեղ կրկին հաց ուտելով, թեյ խմելով ու շարունակ կոնծելով: Մինչև կեսօր բոլոր ուխտավորներն արդեն քաշված են լինում, մնում են միայն քահանաները, որ իրենց ստացած մատաղացուների մորթիներն ու էրիները /աջ ոտը/ բարձում են ձիերի վրա կամ տեղնուտեղը ծախում և վերադառնում (տե՛ս **Եր. Լալայան,** Բորչալուի գավառ. Ուխտագնացություն, Երկեր, Հատոր 3, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2004, էջ 220-221: **Ս. Մկրտչյան**, Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, 2016, էջ 134):
Լոռեցիների սովորություններից հատկապես նշանակալից էր ուխտի գնալը: Գնում էին մեծ սիրով ու հանդիսավորությամբ, իսկ գլխավոր ուխտատեղը Ս. Սարգիսն էր. գնում էին սայլերով, ֆուրգոններով, ձիերով, ոտքով: Ուխտավորների մի մասը գնում էր խաչի և մատուռի զորությամբ իր իղձերն ու ցանկությունները կատարելու, ցավն ու վիշտը փարատելու համար, նաև՝ հեռավոր վայրերից ուխտի եկած իրենց հարազատներին, բարեկամներին ու ծանոթներին տեսնելու և կարոտն առնելու նպատակով: Ուխտավորների մի մասն էլ սրբավայր գնում էր քեֆ-ուրախություն անելու, ուրախ ժամանակ անցկացնելու համար: Խաչ գնացող ուխտավոր ընտանիքներն իրենց հետ տանում էին որևէ մատաղացու՝ խոյ, թոխլի գառ: Ուխտատեղի մոտ մատաղն անում էին, ծառերի շվաքի տակ սեղան պատրաստում և ուրախ ժամանակ անցկացնում: Օղուց և գինու տակառներից օգտվում էին բոլոր կամեցողները: Զուռնա-դհոլի նվագի տակ հանդես էին գալիս կենտապարի և կլոր պարի սիրահարները: Ուխտի եկածներց միայն հավատքի մեջ ջերմեռանդ կանայք և տղամարդիկ էին դժվարագնաց ճանապարհով բարձրանում բարձր բլուրի վրա գնվող Ս. Սարգիս ուխտավայրը՝ Վարդաբլուր գյուղի մոտ, իսկ Վարդավառի ժամանակ՝ ս.Աստվածածին՝ Ղարաքիլիսայում, ս. Նշան ուխտատեղին՝ Օձունում: Համընդհանուր ուրախության ու խնջույքների ժամանակ լինում էին նաև անհաճո դիպվածներ, պատահարներ (տե՛ս Գ. Քարհանյան, Գուգարք. Հնագույն հայկական բնակավայր, գիրք Առաջին (Հնագույն ժամանակներից մինչև 1950 թվականը), «Ասողիկ» հրատ. տպարան, Երևան, 2011, էջ 68):
Վարդավառը սարվորների հետ են անցկացնում գյուղացիների մեծ մասը: Տղաները, հարսներն ու աղջիկները, տնից կամ շուկայից գնած մթերքներն ու մրգերը վերցրած, Վարդավառի կիրակիի վաղ առավոտ ձիերով կամ ոտքով բարձրանում են սարը՝ դեպի իրենց վրանները: Տեղ հասնելով՝ ողջագուրվում են իրենց հարազատների, մտերիմների,

բարեկամների հետ, որոնց երկար ժամանակ չեն տեսել։ Կարոտներն առնելուց հետո նստում են, հանգստանում, զրուցում, միմյանց նորություններ հաղորդում, որից հետո նոր միայն սեղան բացում։ Մարվորները գյուղից բերված ուտելիքներն են հաճույքով ուտում, սար բարձրացածները՝ սարի մթերքները։ Ուտելուց և հանգստանալուց հետո սկսում են տոնի պատրաստություն տեսնել, խնոցի են հարում, կաթ են մերում, մածուն պատրաստում, սերն են քաշում, սերուցք դնում, տապակի մեջ կարագով ու խմորով ագդակ, բիշի, արաժանով խավիծ են պատրաստում։ Դրանից հետո մի գառ են գետնովը տալիս, մատաղ անում, կերակուր պատրաստում և սարի անարատ, զով օդի, ծաղիկների բույրերի մեջ՝ բարձր տրամադրությամբ ասում-խոսում են, ուտում-խմում, նվագում, երգում-պարում են, ուրախանում՝ Վարդնոր անում։ Հաջորդ երկուշաբթի օրը՝ վաղ առավոտյան, սարի մթերքներով, բարիքներով բեռնավորված խումբ խումբ «վարդնորցիները» ծաղկազարդ ալպյան մարգագետիններով իջնում են իրենց գյուղերը (տե՛ս **Գ. Քարհանյան**, Գուգարք. Հնագույն հայկական բնակավայր, գիրք Առաջին (Հնագույն ժամանակներից մինչև 1950 թվականը), «Ասողիկ» հրատ. տպարան, Երևան, 2011, էջ 68)։

Մատաղի միսը մեծամասամբ բաժանում են հարևաններին, բարեկամներին և պատահած անցորդներին։ Համայնական մատաղը կատարվում է ամբողջ համայնքի կողմից, հետևաբար զոհաբերությունները կատարվում են մեծ չափերով, մորթում են մի քանի ոչխար, խոյ և արջառ։ Համայնական մատաղը կատարվում էր կարկտահարությունից, երաշտից կամ այլ տարերային աղետներից, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների հոտը, նախիրը տարափոխիկ հիվանդություններից զերծ պահելու, փրկելու և, ընդհանրապես, համայնքի բարօրության նպատակներով։ Համայնքի կողմից կատարվող մատաղը տեղի է ունենում եկեղեցու, վանքի, խաչքարի առջև։ Այդ գործի վարպետ անձինք, հատկապես՝ հովվություն արած գյուղացիները, մատաղացու կենդանին նախքան մորթելը պտտել են տալիս վանքի, եկեղեցու, սրբավայրի, պաշտամունքային այլ վայրերի շուրջը (կոչվում էր «գլխովը պտույտ տալ »)՝ որպես նվիրումի արտահայտություն։ Մատաղացուի երեսը դարձնում են դեպի արևելք, վայր գցում, մորթում, մաշկում, ապա միս անում, դմակները մանր կտրատում, ձեռքով ճմռում՝ ավելի մանրացնում և մանր մասերի բաժանած մսի կտորների հետ լցնում են կաթսաների մեջ, դնում թեժ վառվող կրակի վրա, եփում ջրով։ Մատաղի պղնձի մեջ, բացի աղից, որպես համեմունք լցնում են ուրց։

Գյուղացիներից յուրաքանչյուրը տնից բերում էր պղնձե աման և շարում կաթսաների շուրջը։ Հավաքվում էր 50-150 աման։ Մատաղ եփող վարպետը շերեփով լցնում էր յուրաքանչյուրի ամանի մեջ խաշու և միս։ Վերահսկող մի գյուղացի ճիպոտը ձեռքին խփում էր ամաններին, որոնց մեջ, օրինակ՝ միսը քիչ էր. այդպիսիք լրացնում էին։ Մատաղը բաժանելուց հետո կաթսաներում մնում էր բավականաչափ մատաղ։ Գյուղի ղեկավարը մարդիկ է ուղարկում, որպեսզի գյուղում գտնվող կամ գյուղով անցնող՝ եկվոր-անցորդ մարդկանց հրավիրեն մատաղ ուտելու։ Մատաղի էրիները սովորաբար բաժին էր հասնում գյուղի քահանային, իսկ կուրծքը /դոշը/ քյոխվային։

Մատաղ անելու սովորույթը մեծ չափերի հասավ Հայրենական մեծ պատերազմի տարիներին։ Պատերազմի դաշտ մեկնած իրենց որդիների ու մերձավորների կյանքի համար օրուգիշեր անհանգստացող հարազատները հաճախ հույսի այլ աղբյուր չունեին, քան էր Աստված և նրան զոհաբերվող մատաղը, որն անում էին՝ որ մատաղի միջոցով իրենց աղոթքն ու խնդրանքը Տիրոջը հասնի, որ մատաղը դրանք ի կատար ածելու զորություն ունենա։

Լոռեցիների առօրյա կյանքում գոյություն ունեին նաև սնոտիապաշտական հավատալիքներ։ Մարդիկ հավատում էին և այսօր էլ շարունակում են հավատալ, օրինակ, չար աչքով հմայելուն /աչք տալ, աչքով տալ/։ Վատն այն է, որ հատկապես գյուղական վայրերում «չար աչք» ունենալը դառնում է մի տեսակ ժառանգական, և նույնիսկ ամբողջ տոհմեր են

էին ոչ միայն հոգևորականներին, այլև ուխտերի մասնակիցներին և մատաղի արարողություններ կատարողներին:

Հետպատերազմյան շրջանում և ընդհուպ 1960-ականները, չնայած մեղմացումներին, պետական հակակրոնական քաղաքականությունը դեռևս ազդում էր բնակչության կրոնական վարքագծի վրա[1]:

«մեղադրվում» «չար աչքի» կրողներ լինելու մեջ (տե՛ս **Գ. Քարհանյան**, Գուգարք. Հնագույն հայկական բնակավայր, գիրք Առաջին (Հնագույն ժամանակներից մինչև 1950 թվականը), «Ասողիկ» հրատ. տպարան, Երևան, 2011, էջ 69-70):

[1] Անցյալի ամենավտանգավոր մնացուկներից են կրոնական նախապաշարումները: Ճիշտ է, մեր մոտ վերացված է կրոնի սոցիալական հիմքը՝ մարդու շահագործումը մարդու կողմից, սակայն կրոնական նախապաշարումները շարունակում են գոյություն ունենալ առանձին մարդկանց գիտակցության մեջ, խանգարում են նրանց ակտիվորեն մասնակցելու հասարակության բարօրության համար կազմակերպվող աշխատանքներին: Կրոնական հավատալիքները մարդկանց դարձնում են վախկոտ, նորից, առաջավորից խուսափող, կյանքը չհասկացող, չճանաչող, կամազուրկ արարածներ: Մեր շրջանում հետամնաց որոշ մարդիկ տուրք են տալիս կրոնական նախապաշարմունքներին, կատարում կրոնական ծեսեր: Առանձին տեղերում հավատացյալներն իրենց ծիսակատարություններին տալիս են տոնական բնույթ, որը երբեմն առաջ է բերում նաև ոչ հավատացյալների հետաքրքրությունը: Կրոնական ծիսակատարությունների օրերին սրբավայրերում հավաքվում են զգալի թվով մարդիկ, մորթում անասուններ և թռչուններ, կանչում կրոնի սպասավորին, որ օրհնի մատաղը: Առանձին հավատացյալներ էլ, կրոնական ծեսերի ժամանակ երբեմն տեղի ունեցող անկարգություններից խուսափելու նպատակով, կատարելագործել են մատաղի արարողությունը: Նրանք ոչխարի կամ գառան ականջը կտրում են սրբավայրում, որպեսզի այն «ընդունելի լինի», ապա մորթում իրենց տներում: Նորաշեն, Սարչապետ, Շահնազար, Ղարաքիլիսա, Կիրովո, Պուշկինո, Պրիվոլնոյե և մի քանի այլ գյուղերում հավատացյալների շրջանում գիտաաթեիստական և քաղաքական բացատրական թույլ աշխատանքների հետևանքով առանձին մարդիկ իրենց մահացած հարազատներին թաղում են վարդապետների ու տերտերների աղոթքների տակ, նրանց գրպանը դնելով 20-25 ռուբլի: Իսկ երեխաներին կնքելու համար Կիրովոյի քահանան վերցնում է 5 ռուբլի, Սարչապետի վարդապետը՝ 3 ռուբլի: Եվ այսպես, իրենց հասցնելով նյութական վնաս, հավատացյալները լցնում են «սուրբ հայրերի» գրպանները: Իսկ վերջիններս էլ, դրամը միմյանց մեջ բաժանելիս, երբեմն տեղիք են տալիս ծեծկռտուկի կամ զբաղվում հարբեցողությամբ: Այսպես, վերջերս Կիրովոյում քահանայի և եկեղեցու սպասուհու միջև դրամի պատճառով ծագեց սուր վեճ, որը լուծվեց միայն գյուղսովետի գործկոմի նախագահ ընկ. Վ. Բարաբաշի միջամտությունից հետո: Նորաշենում երեխաների զգալի մասը կնքվել են: Դպրոցի երեխաներից մեկը «հարամ» է անվանում չկնքված մյուս երեխաներին: Առանձին գյուղերում երեխաները վախենում էին գիշերով որևէ տեղ գնալ կամ անցնել գերեզմանների մոտով, քանի որ նրանց մոտ ամուր նստած էր սատանաների, չարքերի, ոգիների վերաբերյալ հավատալիքները: Նման մարդիկ հաճախակի ձեռք են բերում լուրջ հիվանդություններ՝ ուղեղի կամ հոգեկան խանգարումներ: Կրոնը թույն է մարդու համար, որ սրսկում են տերտերները, գրբացներն ու ամեն կարգի խարդախներ՝ աշխատավորների հաշվին ապրելու համար: Ուրեմն

Այսպիսով, պետության հակակրոնական քաղաքականության արդյունքում, խորհրդային վերջին շրջանում բավականին անկում էր ապրել կիրովականցիների կրոնական վարքագիծը, որը մեծ չափով պայմանավորված էր պետական կրթական քաղաքականությամբ։

Կիրովականում 1980թ. իրականացրած էթնոսոցիոլոգիական հետազոտություններն[1] ամբողջությամբ արտացոլում են նրանց կրոնական վարքագծի իրական պատկերն՝ ըստ հավատքի նկատմամբ ընդհանրական վերաբերմունքի, եկեղեցիներ այցելության դրդապատճառների և կրոնական տոների տարածման սեռա-տարիքային և կրթական հատկանիշների։

Հետազոտությունների վերլուծությունը հնարավորություն տվեց կատարել հետևյալ եզրահանգումները.

● Հավատացյալների ընդհանուր թիվը 25,3 % էր (տե՛ս աղյուսակ 1)։

● Հավատքի նկատմամբ տատանվողները կազմում էին 22,2%։ Անտարբերները և անհավատները կազմում էին 41,8% (տե՛ս աղյուսակ 1)։

● Եկեղեցու կամ կրոնի ակտիվ մերժողները 8,8% էին (տե՛ս աղյուսակ 1)։

● Ծնողների կրոնական վարքագծում գերակայում էին մայրերը (մայրը՝ 39,9%, հայրը՝ 27, 7%) (տե՛ս աղյուսակ 2)։

Եկեղեցի գնալու համատեքստում կրոնական և ժամանցային գործոնները գրեթե հավասար են (տե՛ս աղյուսակ 3)։

● Եկեղեցի գնալու կրոնական ընդհանուր դրդապատճառները (21%) ներառում են հետևյալ ծիսական բաղադրիչները. մոմավառություն՝ 9,8%, աղոթք՝ 6,7%, պատարագ՝ 1,5%, մատաղ՝ 1,0%, տոներ՝ 1,0%, ուխտագնացություն՝ 0,5%, կնունք՝ 0,5%։

● Եկեղեցի գնալու ժամանցի կամ պատահական բնույթի գործոնները (20,5 %) ներառում են հետևյալ բաղադրիչները՝ զուտ հետաքրքրության համար՝ 12,9%, էքսկուրսիա՝ 4,1 %, որպես պատմական հուշարձան՝ 1,5%, մերձեցում ազգային մշակույթին՝ 1,0%, առանց առիթի՝ 1,0%)։

պայքարը կրոնի դեմ պետք է մղվի անընդմեջ, ամենուր (տե՛ս **Համբարյան,** Կրոնը թույն է, Փարոս, Կիրովական, 1963, N 85, նոյեմբերի 1, էջ 2)։

[1] ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Էթնոսոցիոլոգիայի բաժնի գիտարշավ, Կիրովական, 1980թ.։

● Եկեղեցիներ գնալու կրոնական (21,0%) և ժամանցի բնույթի (20,5%) գործոնները գրեթե հավասար էին (տե՛ս աղյուսակ 3).

● Եկեղեցիներ ընդհանրապես չի այցելել կիրովականցիների կեսից ավելին՝ 57,2 %-ը (տե՛ս աղյուսակ 3)։

● Եկեղեցական տոներից ամենատարածվածը Զատիկն է (56,7%) և մասամբ՝ Վարդավառը (17,0%)։ Տոներից ամենաքիչը նշվում էին՝ Վարդանանցը (5,2%), Համբարձումը (6,2%), Սուրբ Աստվածածինը (6,7%), Քրիստոսի Ծնունդը (8,2%), Սուրբ Խաչը (8,2%) և Տեառնընդառաջը (8,2%) (տե՛ս աղյուսակ 4)։

ԱՂՅՈՒՍԱԿ 1.

Բնակչության վերաբերմունքը կրոնի կամ հավատի նկատմամբ.
Կիրովական. 1980թ.

		%
	Հավատում եմ	25,3
	Տատանվում եմ	22,2
	Անտարբեր եմ, չեմ հավատում	41,8
	Պետք է կրոնի դեմ ակտիվորեն պայքարել	8,8
	Ընդամենը	100 %

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Ծնողների կրոնական վարքագիծը.
Կիրովական. 1980թ.

Ձեր ծնողները հավատացյա՞լ են	%
Հայրը	
Այո	27,7
Ոչ	72,3
Ընդամենը	100
Մայրը	

Այո	39,9
Ոչ	60,1
Ընդամենը	100 %

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Եկեղեցի գնալու առիթը Կիրովականում

1980թ.	%
Աղոթել	**6.7**
Տոներին մասնակցել	**1.0**
Որպես ուխտ	**0.5**
Որպես պատմական հուշարձան	1.5
Մերձեցում ազգային մշակույթին	1.0
Հետաքրքրության համար	12.9
Մոմավառություն	**9.8**
Մատաղ	**1.0**
Էքսկուրսիա	4.1
Առանց առիթ	1.0
Կնունք	**0.5**
Պատարագ	**1.5**
Դժվարանում եմ պատասխանել	1.0
Չի գնում եկեղեցի	*57.2*
Ընդամենը	100%

ԱՂՅՈՒՍԱԿ 4

Կրոնական տոների տարածվածությունը կիրովականցիների շրջանում

1980թ.	%
Քրիստոսի ծնունդ և մկրտություն (Զրօրհնեք)	8,2
Տեառնընդառաջ (Տրընդեզ)	8,2
Վարդանանց	5,2

Զատիկ	56,7
Համբարձում	6,2
Վարդավառ	17,0
Սուրբ Աստվածածնի վերափոխում	6,7
Խաչվերաց	8,2

ԱՂՅՈՒՍԱԿ 5

Կիրովականցիների կրոնական վարքագիծն ըստ տարիքային խմբերի

1980թ %

Կիրովական 1980թ		Տարիք		
		18-29	30-49	50<
Ինչպիսի վերաբերմունք ունեք կրոնի նկատմամբ	Հ ավատում եմ	24.5	34.7	40.8
	Տատանվում են	37.2	46.5	16.3
	Անտարբեր եմ, չեմ հավատում	39.5	43.2	17.3
	Դժվարանում եմ պատասխանել	0.0	0.0	100.0
Ընդամենը		33.0	41.8	25.3

ԱՂՅՈՒՍԱԿ 6

Կիրովականցի կանանց և տղամարդկանց կրոնական վարքագիծը

1980թ %

		Սեռ	
		Արական	Իգական
Ինչպիսի վերաբերմունք ունեք կրոնի նկատմամբ	Հավատում եմ	42.9	57.1
	Տատանվում եմ	41.9	58.1
	Անտարբեր եմ, չեմ հավատում	58.0	42.0
	Դժվարանում եմ պատասխանել	75.0	25.0
Ընդամենը		49.0	51.0

ԱՂՅՈՒՍԱԿ 7

Կիրովականցիների կրոնական վարքագիծն ըստ կրթական մակարդակների

1980թ %

		Կրթություն					
		Մինչև ութամյա	Ութամյա	Միջնակարգ	Միջն. Մասնագիտական	Թերի բարձրագույն	Բարձրագույն
Ինչպիսի վերաբերմունք ունեք կրոնի նկատմամբ	Հավատում եմ	26.5	18.4	28.6	16.3	2.0	8,.2
	Տատանվում եմ	4.7	11.6	34.9	30.2	16.3	2.3
	Անտարբեր եմ, չեմ հավատում	6.2	7.4	24.7	30.9	14.8	16.0
	Պետք է կրոնի դեմ ակտիվորեն պայքարել	5.9	5.9	17.6	23.5	5.9	41.2
	Դժվարանում եմ պատասխանել	75.0	0.0	25.0	0.0	0.0	0.0
Ընդամենը		12.4	10.8	27.3	25.8	10.8	12.9

● 1980-ականներին խորհրդային տոների միջին տարածվածությունը կազմում էր 81,3%, իսկ կրոնականը կամ եկեղեցականը՝ 14,51%։

● Եկեղեցական տոների անկման և խորհրդային տոների տարածման հակընթաց միտումները պայմանավորված էին այդ պետության հակակրոնական քաղաքականությամբ, սերունդների շրջանում խորհրդային գաղափարախոսության պրոպագանդայով, չգործող եկեղեցիների առկայությամբ, սեռա-տարիքային խմբերի առանձնահատկությամբ (տե՛ս աղյուսակներ 5 և 6), կրթական մակարդակով (տե՛ս աղյուսակ 7), այդ համատեքստում՝ սոցիալ-մասնագիտական առաջընթացի մոտիվացիայով։

● Խորհրդային շրջանում կրոնական վարքգիծն առավել բարձր էր տարեցների շրջանում, քանի որ նրանք ազգային կրոնական ավանդույթների անմիջական կրողներն էին: Կրոնական վարքագիծն ընդհանուր առմամբ ցածր էր երիտասարդների շրջանում:

● Մասնակի շեղումներով հանդերձ, կրոնական ավանդույթների հիմնական կրողները դարձյալ կանայք էին:

● Խորհրդային շրջանում որքան ցածր էր կիրովականցիների կրթական մակարդակն, այնքան բարձր էր կրոնական վարքագիծը (տե՛ս աղյուսակ 7):

Самвел Мкртчян, Социально - культурные особенности религиозного поведения кироваканцев в советский период - Целью данного исследования является полный анализ религиозного поведения кироваканцев в советский период.

Начальный советский период (1920-1930 гг.) как во всей Армении, так и в Кировакане отличается ярко выраженной антирелигиозной и антинациональной политикой, что сказалось на упадке веры. Мишенью антирелигиозной политики государства были прежде всего традиционные армянские религиозные праздники и обряды. Естественно, гонения были направлены особенно против церквей и духовенства, что проявлялось закрытием церквей, разорением, убийствами и ссылками духовенства.

Организаторами антирелигиозных акций были в основном республиканские и особенно местная организация «Союз боевых безбожниковѣ. Однако их деятельность была малоэффективной и была обусловлена еще сохранившимися национальными и религиозными традициями.

В годы Великой Отечественной войны произошел определенный рост религиозного поведения кироваканцев, что было связано с тяжелой военной обстановкой.

В последний советский период в результате антирелигиозной политики государства религиозное поведение кироваканцев значительно снизилось, что было вызвано специальной образовательной политикой, отрицающей религию.

Результаты этносоциологического исследования (1980г.) полностью отражают реальную картину религиозного поведения кироваканцев по отношению к вере, мотивам посещения храмов и масштабам распространения церковных праздников.

Общее количество верующих в Кировакане составляет 25,3%, колеблющихся - 22,2%, равнодушных и неверующих - 41,8%, активно борющихся с религией или нетерпимых - 8,8 %.

В религиозном поведении родителей определенное преобладание имеют матери (мать - 39,9 %, отец - 27,7 %). В контексте посещения церквей религиозный и развлекательный факторы почти равны. Религиозные мотивы посещения храма включают в себя следующие ритуальные компоненты: зажигание свечей - 9,8%, молитва - 6,7%, литургия - 1,5%, жертвоприношение - 1,0%, праздники - 1,0%, крещение - 0,5%, паломничество - 0,5%.

Развлекательные или случайные факторы имеют следующую картину. интерес - 12,9%, экскурсия - 4,1%, исторический памятник - 1,5%, сближение к национальной культуре - 1,0%, без повода - 1,0%. Дружеские взаимные визиты особенно популярны во время праздников и семейных торжеств - 48,8%. Наиболее популярными из церковных праздников являются Пасха /Воскресение Христа/ (56,7%) и отчасти Вардавар /Преображение Христа/ (17,0%). Наименее упоминались Вардананц (5,2%), Амбарцум /Вознесение Христа/(6,2%), Успение Пресвятой Богородицы (6,7%), Рождество Христово (8,2%), Воздвижение Святого Креста (8,2%), Теарнандарадж /Сретение/ (8,2%). Примечательно, что большинство жителей Кировакана вообще не посещали храмы (57,2%).

Samvel Mkrtchyan, Socio-cultural features of the religious behavior of the in habitants of kirovakan in the soviet period - The purpose of this study is a complete analysis of the religious behavior of the inhabitantsof Kirovakan during the Soviet period.

The initial Soviet period (1920-1930), both throughout Armenia and in Kirovakan, is distinguished by a pronounced anti-religious and anti-national policy, which affected the decline of faith.

The target of the state's anti-religious policy was primarily the traditional Armenian religious holidays and rituals. Naturally, the persecutions were directed especially against the churches and the clergy, which was manifested by the closing of churches, their destruction, murders and exiles of the clergy.

The organizers of anti-religious actions were mainly within the republic and especially the local organization "Union of Fighting Atheists". However, their activity was ineffective due to the still preserved national and religious traditions.

During the Great Patriotic War, there was a certain increase in the religious behavior of the inhabitants of Kirovakan, which was a consequence of the difficult conditions of he period.

In the late Soviet period, as a result of the anti-religious policy of the state, the religious behavior of the inhabitants of Kirovakan significantly decreased, which was caused by a special educational policy that denied religion.

The results of an ethno-sociological study (1980) fully reflect the real picture of the religious behavior of the inhabitants of Kirovakan in relation to faith, the motives for visiting temples and the extent of distribution of church holidays.

The total number of believers in Kirovakan is 25.3%, vacillators - 22.2%, indifferent and non-believers - 41.8%, actively fighting against religion or intolerant - 8.8%.

In the religious behavior of parents, mothers have a certain predominance (mother - 39.9%, father - 27.7%).

In the context of church visits, religious and recreational factors are almost equal. Religious motives for visiting the temple include the following ritual components: lighting candles - 9.8%, prayer - 6.7%, liturgy - 1.5%, sacrifice - 1.0%, holidays - 1.0%, baptism - 0.5%, pilgrimage - 0.5%.

Recreational or random factors have the following picture. interest - 12.9 %, excursion - 4.1%, historical monument - 1.5%, rapprochement with the national culture - 1.0%, for no reason - 1.0%.

Friendly mutual visits are especially popular during holidays and family celebrations - 48.8%.

The most popular feasts are Easter (56.7%) and partly Vardavar (17.0%). The least mentioned were Vardanants (5.2%), Hambartsum (Ascention) (6.2%), Assumption of the Holy Mother of God (6.7%), Nativity of Christ (8.2%), Elevation of the Holy Cross (8.2%), Thearnandaraj (Candlemass) (8.2%)%).

It is noteworthy that the majority of Kirovakan residents did not attend temples at all (57.2%).

Ուղարկվել է խմբագրություն 15.11.2022թ.
Գրախոսվել է 20.12.2022թ.
Ստորագրվել է տպագրության 25.12.2022թ.